

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԻՆՉՊԻՍ ՊԵՏԷԻ ԱՊՐԵԼ ԲԱԳԴԱՆՈՐ

ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԵՐ.

ԳՐԱԳԵՐԻ ՀԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ.

(Հարունակութիւն *).

Մարդուն կարելի է ծանաչել իւր կարգա-
ցած գրքերով և իւր այցելած հասարա-
կութեամբ։ Գրքերի հասարակութիւնը նոյն է
ինչ որ մարդիկներինը, և մենք պիտի աշխա-
տենք ապրել թէ մարդիկների և թէ գրքերի
ամենալաւ հասարակութեան մէջ։

Լաւ գրքերից մարդը կարող է շատ օգտա-
ւէտ բան սովորել, շատ լաւ բան իմանալ։
Գրքերը բոլորովին առանձին՝ հաճելի և միան-
գամայն օգտաւէտ աշխարհ են կաղմում։ Սա-
կայն վատ գրքերի ընթերցանութիւնից նոյն
եռանդով խուսափելու է, ինչպէս որ վատ
մարդիկների հասարակութիւնից։

Մի ոմն շատ ճշմարիտ է ասել թէ ամե-
նալաւ գրքեր նորա են, որոնք առաւելապէս
նմանում են բարի դործերին։ Գրքերը մաք-
րում են, բարձրացնում են և զօրացնում են
մարդուն։ Մորա ընդարձակում են և զարգաց-
նում են նորա խելքը, բնաւորութեան հար-
թութիւն և զուարթութիւն են հաղորդում։
Լաւ գիրքը լաւազոյն բարեկամի տեղ պէտք է
համարել։ Մի նոյն է և այսօր, ինչ որ երէկ
էր և երբեք դաւածանելու չէ։

Գիրքը ամենահամբերող և տանող ընկեր
է և չի ուրանայ մեզ թշուառութեան միջո-
ցում։ Գիրքը մեզ միշտ մի և նոյն քաղցր յօ-
ժարակամութեամբ է հանդիպում, զուարճա-
ցում է և հրահանգում է երիտասարդութեան
մէջ, զբաղեցնում է և մխիթարում է ծերու-
թեան մէջ։

Գրքերն իրանց բոյներ են դնում մեր սրտի
խորքում։ Գրքերի մէջ կարդում են այն, ինչ

որ պատահել է ուրիշ մարդիկներին, իսկ մեզ
թւում է, թէ այն մեզ հետ է պատահել։

Պէտք է միշտ խօսել այն ահագին ազդե-
ցութեան մասին, որ ունեցան գրքերը, ա. Գրք-
քից սկսած, մարդկութեան լուսաւորութեան
վրայ։ Գրքերի մէջ տեսնում ենք առաքինու-
թեան, համբերութեան և անդադար աշխա-
տութեան օրինակներ, և նոցանից շատ յա-
ճախ քաջակրութիւն և մխիթարութիւն ենք
ստանում։

Լաւ գրքերը առաջինն ի հարկէ Աւետա-
րանն է, միշտ բարեգործ ազդեցութիւն են
ունեցել և ունին հազարաւոր մարդիկների
վրայ, նոցա սովորեցնելով համբերութիւն,
աշխատութիւն և հնազանդութիւն Աստուծու
կամքին։

Որինակ Ռօբինզօն Կրուզօն—բոլոր մանուկ-
ների այս սիրած գիրքը—չէ կարող լաւ ազ-
դեցութիւն չունենալ մտքի և բնաւորութեան
վրայ, որովհետեւ մեզ սովորեցնում է աշխա-
տութիւն, համբերութիւն և զուարթութիւն։
Կարդալով թէ ինչպէս Ռօբինզօն Կրուզօն
այնքան տարի միայնակ անապատ կղզու վրայ
էր ապրում, Աստուծուն աղօթում և չէր
վհատում թէ ինչպէս էր թեթեւացնում իւր
միայնակութեան անձկութիւնն անդադար աշ-
խատութեամբ, մենք սկսում ենք ամաչել ձանձ-
րանալուց և մեր վիճակի դէմ զանգատելուց,
մեր ընկեր մարդիկների մէջ ապրելով։

Այնպիսի գրքեր ևս կան, որոնցից սովո-
րում ենք թէ ինչպէս բարեփոխելու է մեր ար-
նային կացութիւնը, երկրագործութիւնը, թէ
ինչպէս պահպանելու է մեր առողջութիւնը,
նոյնպէս և մեզ հաճոյական և բարեկեաց
կեանք վարելու հնարաւորութիւն տալող
գրամբ։

ԱՊՐԵԼՈՒ ԵՐԷՆՈՍ.

Ապրելու արհեստն արժանի է միւս գեղար-
հեստների հետ միասին դասուելու, այս ար-
հեստը բովանդակում է սեփական միջոցնե-
րից ամենամեծ օգուտ քաղելու և կեանքից
ամենաբարձր վայելչութիւններ քաղելու հա-

բաւորութեան մէջ, կատարեալ բաղդաւորութեան հասնելու համար: Սակաւ արհեստ չէ պէտք բաղդաւոր կեանք փորել իմանալու համար: Բաղդաւոր լինելը նշանակում է այն մանրր փայելութիւններ փայելել իմանալ որով լցուած է մեր տնօրեայ կեանքը:

Պրամը չէ զարդարում կեանքը այլ ընտիր ճաշակը, ճիշդ, լուսամիտ հայեացքը իրերի վրայ և սիրող սիրտը:

Այս յատկութիւններն ունենալով, մարդը ամենահամեստ վիճակի մէջ կարող է բաղդաւոր լինել: Աշխատութիւնը չէ արգելում ճաշակի և մտքի զարգացմանը, աշխատաւոր կեանքը մարդուն ազնուացնում է:

Ընտիր ճաշակը ընտանեկան կեանքում մեծ փայելութիւն է: Առաջին անգամ նոր ծանօթների դրան շէմքին ոտը դնելուն պէս, խնայն կարելի է գուշակել, եթէ այն տանը ճաշակով մարդիկ են ապրում: Ամբողջ շրջապատող կարգ ու սարքի մէջ ընտիր կարգ է երևում: Թի տեսակ հանգիստ էք զգում այս մաքուր անկիւնի մէջ: Լուսամտի մէջ ծաղիկներ, պատերի վրայ նկարներ, դարակներ մէջ զրքեր, կարասիքը թէև ճոխ չէ, բայց հանգիստ և յարմարաւոր:

Ազդելու արհեստը անային կեանքի ամեն կողմերին է վերաբերում: Դուք ճաշի էք նստում այն տանտէրի մօտ, որի բնակարանը վեր նկարազրեցիկ, ձեզ կրեւն քիչ տեսակ, բայց սննդարար և համով պատրաստած կերակուր: Նպարը թարմ, ձերմակեղենը մաքուր, անօթներն արժանազին, բայց սիրուն, պարզ ջուրը մաքուր բաժակի մէջ այնպէս է փայլում որ յիշել անգամ չէք կամենայ թանկազին զինին: Ահաբաբա՛ բայց զարգացած մարդիկ իրանց համար բնակարան են ընտրում ամենաողջ տեղում ուր օդն առաւել թարմ է և փողոցներն առաւել մաքուր, դրան առաջ միշտ աւելում է և աւագ ցանած, լուսամտերի տախտակների վրայ վարդի պոյտեր: Որքան որ չունենոր լինին այս տնակի բնակիչները, դուք հասկանում էք, որ նոքա գիտեն ապրել: Մայնք այժմ հեռաւոր ցե-

խոտ փողոցին, այնտեղ կտեսնէք փած տուն, չլուացում, պատառոտում տղաներ խաղում են աղբի կոյտերի մէջ, անկարգ, չսանտրած կանայք նայում են ձեզ, դրան մէջ պարապ նստած, զգում էք, որ բոլոր շուրջը աղքատութիւն է, մինչդեռ այս խրճիթում և այն մաքուր տնակում բնակիչները շարաթական մի և նոյն վարձ են ստանում:

Ի՞նչի մի և նոյն դաշտում աշխատող երկու երկրագործներից, կամ մի և նոյն գործարանում աշխատող բանուորներից, մին ուրախ է, թռչնիկի պէս երգում է միշտ մաքուր փայելուչ հագուստ ունի: Ամենայն կերակրի առաւօտեան նա անշուշտ մաքուր հագուստ է հագնում և ընտանիքով գնում է եկեղեցի: Մա իւր քսակի մէջ միշտ դրամ ունի, և բացի սորանից մի փոքրիկ դումար ևս խնայողութեան դանձարանում ունի դրած: Պարտքեր նա չունի, կինը և զաւակները մաքուր հագուստ ունին, ինքն գրքեր է կարդում, հոգ է տանում իւր զաւակների կրթութեանը: մինչդեռ նորա ընկերը, դեռ աւելի ռոճիկ առանալով, գալիս է աշխատելու տրտում տնուր, միշտ փնթփնթում է, վատ հագուստով և վատ կօշիկներով: Տօն օրերին նա կէսօրից վաղ տնից չէ դուրս գալիս, այն ևս մի բաժինով, երեսը չլուացած, մազերը չսանաբած, կարմրած, ուռած աչքերով: Մորա մանուկները պատառոտում հագուստով, բորիկ վաղվում են փողոցի մէջ առանց հսկողութեան: Մորա գրպանը դատարկ է, բայց շարաթ երեկոյից (Անդիսյում աշխատաւորները շարաթ երեկոյանն են ստանում շարաթական վարձը), երբ նա պարտքեր է վճարում: Մա ապրում է առօրեայ վարձով անտեսած չունի ոչինչ, ոչինչ չէ կարդում, ոչինչ մտախն չէ մտածում, միայն բանում է, ուտում է, խմում է և քրնում է: Ի՞նչից է գոյացել աղապիսի դարմանալի տարբերութիւնն այս երկու մարդու մէջ: Մորանից է, որ մինի միտքը և ճաշակը զարգացած են, նա գիտէ ապրելու արհեստը, նա ոչ միայն ինքն է բաղդաւոր, հապա իւր բոլոր շուրջն ևս տարածում է հանգստութեան

և բաւականութեան զգացում: Միւսն ընդհակառակն կոպիտ է, անտաշ, միայն ճաշի և խմիչքի վրայ է մտածում: ոչորի և ոչնչի մասին հոգ չէ տանում և վարում է անասունի կեանք: Մինչդեռ առաջինը ընդհանուր սէր և յարգանք է վայելում նորա օրինակ բարեգործ ազգեցութիւն ունի ընկերների և ծանօթների վրայ: երկրորդից ընդհակառակն ամենքը խորշում են մանուկները դուրսէն հօր քայլերը լսելիս: կինն անհանգիստ է, երբ տեսնում է, որ նա արքած տուն է վերադառնում: Այդքան նորան չէ խնայում: երբ մեռնում է, իւր ընտանիքը առանց մի կտոր հացի թողնելով:

Այրերու արհեստն ինչպէս վերն ասացինք, ամենից առաւել ընտանեկան կեանքին մէջ է երևում: Իսկ ընտանեկան կեանքին բողբոջող սակաւ համար, առաջին պայմանը բարեկեցութիւնն է: Արտեղ ամենքը կուռում են, որ տեղ թագաւորում է կեղտոտութիւն, անկարգութիւն, անմաքրութիւն, այնտեղ բարեկեցութիւնն աներեւակայելի է:

Այլ մարդը, օրինակ, շարունակ աշխատում է ամբողջ օրը երեկոցեան տանը հանգստանալու ուրախալի յոյսով: Նորա բացակայութեամբ հոգատար կինը ամեն բան կմաքրէ, կլուանայ, կտեղաւորէ, ինքն կպատրաստէ իւր սղաճարդու սիրած կերակուրները, սեղան կը պատրաստէ, և այնպիսի մի քաղցրութիւն և հանգստութիւն կտայ համեստ տնային անկիւնին: որ հարկաւ ոչ մի կլուր և ոչ մի պանդոկ չեն հրապուրի նորան այնտեղից դուրս դալու: և զուարճութեամբ կանցուցանէ այս և միւս բոլոր երեկոները իւր ընտանիքի հետ:

Բարեկեցութիւն կամ յարմարութիւն բառով պէտք է իմանալ ոչ միայն տաք բնակարան, հանգիստ կարասիք և լաւ ճաշ, հապա մի և նոյն ժամանակ մաքրութիւն, մաքուր օդ և կարգ: Բարեկեցիկ կեանքի մէջ մարդը զարդանում է թէ Ժիզիքապէս թէ բարոյապէս: Բարեկեցութիւնը շատ առաքինութիւնների հիմն է լինում:

Բարեկեցութիւնն անշուշտ հարստութիւն

չէ պահանջում: Զուենորի համեստ տնակը անհրաժեշտ իրերն ունենալով և զլիսն մաքրակեցադ խոհական և խնայող տնտեսիկին կանգնած, կարող է բարեկեցիկ կեանքի ամեն պայմաններն ունենալ: Այլ է բարեկեցութիւն չկայ, այդ մեծ մասամբ սպացոյց է սեփական առտնին տնտեսութիւնը վարել չիմանալու:

Տնտեսութեան մէջ խնայողութիւնն անհրաժեշտ է: Խնայիր կոպէկը, իսկ բուրքիներն ինքն իրանք կհաւաքուին: Խնայող, տնտեսուհի կինը դանձ է իւրաքանչիւր մարդու համար:

Ընդհանրապէս առանց կնոջ գործակցութեան դժուար է առտնին կացութեան մէջ տնտեսութիւն, մաքրութիւն և կարգ պահպանել: Այլ կինը շուայ է, դրամը նորա ձեռից հոսում է ինչպէս ջուրը մաղի մէջից: Իսկ եթէ խնայող է, իւր տունը խաղաղ, հանգիստ, յարմար բոյն է դարձնում և շատ անգամ պատահում է, որ խելացի հոգատար կինը իւր ընտանիքի ապագայ հարստութեան և բարօրութեան հիմք է դնում: Այլ մարդու մանուկների և տնայինների բարեբաղդութիւնը կնոջ, մօր, տնտեսիկնոջ ձեռին է:

Արքան որ այլը խնայող լինի, եթէ ասն կառավարութիւնը տնտեսաբար չէ լինում, դրամը տնտեսելու նորա հոգացողութիւնը նոյնպէս զուր կլինի, ինչպէս այն կնոջ հոգացողութիւնը, որի այլը արբեցող և վատնիչ մարդ է:

Կեանքի մէջ անհրաժեշտ է դարձեալ ինքնագործունէութիւնը: Արեւք օտար օգնութիւն, երբեք կողմնակի հոգ չեն կարող փոխարինել մարդու սեփական գործունէութիւնը և հոգատարութիւնը իւր մասին: Ի հարկէ ուրիշի օգնութիւնը կարող է ժամանակաւորապէս թեթեւացնել մարդու դրութիւնը, բայց միանգամայն ստորացնում է նորան իւր աչքում և սովորեցնում է նորան ամեն բանի մէջ ուրիշների վրայ յոյս դնել և ոչ իւր սեփական ոյժերի վրայ: Աւտի մարդու համար արած մեր ամենահաստատ բարիքը և ամենամեծ ծառայութիւնը այն է, որ սովորեցնենք նորան ինքն իրան օգնելու գործաց-

ներք նորա մէջ ինքնագործունէութիւն և խր-
նայողութիւն, սովորեցնենք նորան իւր մա-
սին հոգալ և օգնենք նորան անկախաբար ապ-
րելու, իւր հացն ինքնուրոյն աշխատութեամբ
վաստակելու: Մի շատ ճշմարիտ առած կայ.
«Սղնիր ինքդ քեդ, և Աստուած ևս քեզ կօգ-
նէ»: Աշխատութիւնն և կարգը անհրաժեշտ են
ամենայն տնտեսութեան մէջ: Երբ ամեն բան
իւր ժամանակին է շինուած և իւր տեղն է
դրուած, այս հանգամանքը շատ աշխատու-
թիւն և ժամանակ է տնտեսում: Զուր չէ ա-
սում ամերիկական առածը թէ «ժամանակը
դրամ է»: Կորցրած ժամանակն երբէք դարձ-
ներու չես: Բարեկեցութիւնը շատ կախումն
ունի նոյն իսկ մարդիկներից: Եթէ տանուտէրն
և տանտիկինը խելացի, բարեմոյն, գործու-
նեայ, սրտաբաց անձներ են, նոքա կարող են
ամենահամեստ կարգուսարքով ևս հիացնել:
Լաւագոյն է զետնախնձորից կերակուրը և սո-
րա հետ սերը, քան թէ գերացրած եզր և
նորա հետ ատելութիւնը:

Խոհեմ, բարի խաղաղ լուսաւորուած մար-
դիկ միշտ գիտեն իրանց տունը հաճելի և բա-
րեկեցիկ դարձնել: Նոքա քաղցրութեամբ են
ընդունում հիւրերին և միշտ բան կգտնեն
նոցա վայելուչ կերպով մեծարելու:

Քաղաքավարութիւնը և լաւ վարմունքը
ամենեւին այնպիսի դատարկ բան չեն, ինչպէս
որ շատերը կարծում են: Սոքա շատ անգամ
թեթեւացնում են մեզ համար կենցաղավարա-
կան գործերն և զուարճալի են դարձնում
մարդիկների փոխադարձ յարաբերութիւն-
ները:

Ամարտապէս քաղաքավար մարդը հեղա-
բարոյ է, միշտ պատրաստ է ուրիշին հաճելի
գործ անելու և աշխատում է չվշտացնել ոչ
ոքին: Մարդս պարտական է յարգել ուրիշի
անձնաւորութիւնն եթէ կամենում է, որ իրան
ևս յարգեն և երբէք կատակով անգամ պի-
տի չասէ այն, ինչ որ կարող է վիրաւորել:
Միթէ դժուար է սովորել քաղաքավար և
քաղցր լինել: Պէտքէ միայն կոպիտ չպատաս-
խանել եթէ ձեզ հարց կառաջարկեն չհայ-

հոյել եթէ ձեր պարտամունքը կխանդարեն
զիջողաբար տանել ուրիշների կոպիտ վար-
մունքը:

Մարդու բաղաւորութիւնը կախումն ունի
զխաւորապէս իւր բարի բարքից, ուրախու-
թիւնից, բարեմոյն վարմունքից և ուրիշներին
հաճելի բան անելու պատրաստ լինելուց: Բա-
րեմոյն և քաղցր մարդը միշտ կկարողանայ
այնպէս կարգադրել որ նորա բոլոր շրջապա-
տողները հանգիստ և յարմարութիւն ունե-
նան: Սա տաքացնում է իւր ներկայութեամբ
և իւր օգտին է տրամադրում բոլոր սրտերը:

Քաղաքավարութեան ամեն կոզմից Ֆրանս-
սիացիները կարող են մեզ լաւ օրինակ լինել:
Բացի նորանից, որ նոքա քաղաքավար են մի-
մեանց հետ, նոքա անձեռնմխելի են համա-
րում ուրիշի սեփականութիւնը: Անշուշտ գա-
ղափար ստանալու համար Ֆրանսական ազգի
բնաւորոյթի մասին առհասարակ, հարկաւոր
է նայել դիւղերում, երկրի ներսն ապրող ժո-
ղովրդին, այն ժամանակ կհամոզուինք թէ ինչ
աստիճանին յարգում է այս ազգը ուրիշի սե-
փականութիւնը: Այնտեղ ոչ ոք չի թոյլատ-
րի իրան ուրիշի ծառից մի խնձոր կամ տանձ
քաղել թէև ծառը նոյն իսկ ճանապարհի
վրայ լինէր, իսկ կտրել կամ վնասել ծառը
անկարելի է նոցա մէջ: Ուրիշի սեփականու-
թեան այս յարգանքն է ահա, որ հնար է
տուել Ֆրանսացի դիւղացիներին դիւղերի մէջ
եղած բոլոր մեծ ճանապարհներն երկու կող-
մից ևս խնձորին և ուրիշ պտղատու ծա-
ռեր տնկել որոնք անցորդներին ստուեր են
տալիս և միւսնոյն ժամանակ մեծ օգուտ են
բերում իրանց տէրերին:

Սակայն բացի ուրիշի սեփականութեան յար-
գանքից, Ֆրանսիայում ամեն դասակարգերի
մանուկներին խստութեամբ սովորեցնում են
յարգել անձնաւորութիւնը և նորա զոյց-
մունքը: Շատ քիչ կպատահէք այնտեղ կո-
պիտ մարդուն: Թողովուրդը վերին աստիճա-
նին քաղաքավար է միմեանց հետ: Ուրիշի
զգացմունքն յարգելը մեծ բարոյական յատ-
կութիւն է, սա կարող է մեծ օգուտ տալ

ժողովրդական զարդացմանը, եթէ պտտուստուր ընտանեկան կրթութեան հետ: Սորանից ծնողներն և մանուկները միակերպ օգուտ կ'ապագէին բարոյական կողմից:

Տնային անմեղ խաղերը նոյնպէս շատ են նպաստում վարժմունքի լաւ ձեւերի և յաջողակութեան մշակութեանը: Այսպէս անկարելի է ամբողջ օրեր միայն աշխատելու և քնել: Հարկաւոր է անշուշտ ազատ ժամանակի մի մասը զործադրել մտաւոր պարպմունքի և մարմնական վարժմունքի համար: Զբօսանքը հարկաւոր է աշխատող մարդուն, մանաւանդ մանուկներին ուսումնարանների մէջ: Տեսնելով օրինակ մի որեւէ տան առաջ, որ մանուկները կամ պատանիները դնակի կամ թաքուստի խաղ են խաղում, մի կարծէք թէ նոքա զուր են կորցնում ժամանակը: Ընդհակառակն նոքա խնամում են իրանց կեանքը:

Արքան կարելի է շատ շարժողութիւն ունեցէք, որքան կարելի է յաճախ զբօսնեցէք, եթէ կամենում էք շարունակ առողջութիւն վայելել: Եթէ կամակոր նստած էք աշխատելու և չէք շարժում, այդպիսի կենցաղավարութիւնն անշուշտ կ'ներգործէ ձեր առողջութեան վրայ: Այն զիանականներն, որոնք կարծում են թէ ժամանակ չունին ամենօրեայ զբօսանքի համար, վաղ թէ ուշ ժամանակ կունենան հիւանդութեան համար: Մեր վրայ սուրբ պարտականութիւն կայ ոչ միայն չհատելու և իրերի վրայ տրտում չնայելու, այլ և ուրիշներին այս կողմից օրինակ տալու: Կանցանքները մեծ մասամբ գործում են այն մարդիկն, որոնք կեանքի մէջ չեն ունեցել զուարճութիւնների, չեն եկեղեցիներ և զուարճութեան բարեգործ ազդեցութեանը և հեռացել են հասարակութիւնից:

Հանգիստ առնելու և զբօսնելու ցանկութիւնը մարդու բնական կարիքն է, որը խեղդել անկարելի է. մի անմեղ զուարճութիւնն անհամեմատ աւելի բարեգործ ազդեցութիւն ունի մարդու վրայ, քան թէ քանի մի տասնեակ բարեպաշտ քարոզներ:

Խմելքների չափաւորութիւն տարածողները ուշ չեն դարձրել այն հանգամանքին, որ ժողովրդի հակումն դէպի արեւցութիւնը նորա կուլիա ճաշակների և միտք և սիրտ զարգացող անմեղ զուարճութիւնների պակասութեան հետեւանքն է: Աշխատաւոր ժողովուրդը մեր մէջ դեռ ևս կուտութեան մէջ է գտնուում: Մա իւր համար ամենամեծ զուարճութիւն է համարում իւր «անասնական կարիքներին բաւարարութիւն տալը» և հանգստութեան ժամերին խմում է մինչև անզգայանալը: Գերմանացիներն հին ժամանակ առաջնակարգ արեւցողներ էին համարուում: Այժմ նոքա ամենաչափաւոր ազգ են: Անգլիացում առած կար. «արած է իրը» դերմանացի ռամիկը: Հապա ի՞նչով բժշկուեցան գերմանացիներն այս արամից:—Արթութեամբ և երաժշտութեամբ:

Այո, երաժշտութիւնը շատ բարերար ազդեցութիւն ունի հասարակական բարքի վրայ: Երաժշտութիւնը վայելչութիւնների աղբիւր է, առանին կեանքի մէջ և առանձին մի հրապուրանք է հաղորդում հասարակական ժողովներին: Հ. Մատեօ, հոգալով իրանդական ժողովրդի մէջ չափաւորութիւն տարածելու, զուր չէր աշխատում այնտեղ խմրական երգեցողութեան կուրքներ հաստատելու: Մա հասկացաւ, որ ժողովրդի ձեռից օղին խլելիս, հարկաւոր է դորա փոխանակ նորան որեւիցէ առողջ, հաճելի զբոսող զուարճութիւն տալ:

Երաժշտութեան ներմուծումն ժողովրդական դպրոցների ընդհանուր ուսման դասընթացի մէջ շատ գեղեցիկ ներդրութիւն կունենար ժողովրդի վրայ: Հապա ի՞նչի մեղանում մանուկները չեն երգում դասարանում, ինչպէս այս լինում է Գերմանիայում: Այն ժամանակ իւրաքանչիւր ընտանիքի մէջ սեփական փոքրիկ երգեցիկ խումբ կլինէր, և աշխատութիւններից ազատ ժամերին հասակաւորներն ևս կերգէին խմովին, ինչպէս օրինակ գերմանացի զինուորները բանակների մէջ: Աշխատութիւնն ամենևին փնտա չէր կրի բանւորների երաժշտական վարժմունքից: Ար-

Հասկես այն երկրատարգներն որոնք յօժարամտութիւն և ընդունակութիւն ունին դէպի երաժշտութիւնը: Կկարողանային նուազել սովորել որևիցէ մի հասարակ նուագարանի վրայ և այնպէս իւրաքանչիւր գիւղում կոչանային քանի մի երաժշտագէտների որոնք տօն օրերին և երեկոներին, աշխատութիւնների վերջացնելուց յետոյ, կնուագէին մի տեղ մի տան առաջ կամ մի ծառի տակ: Այս դէպքում ի հարկէ ամենքը թէ մանուկները և թէ հասակաւորներն ուրախութեամբ կհաւաքուէին նոցա շուրջ լսելու իսկ երբեմն գուցէ և պարելու:

Մեծ օգուտ կարող էր տալ նոյնպէս պարտեզներ շէնելը և պողատու ծառեր տնկելը: Իւրաքանչիւր գիւղացին կարող էր տնկել իւր տան շուրջ գոնէ քանի մի խնձորենի կամ քանի մի թուփ մօշ, ելակ և բալ: Սոքա մեծ խնամատարութիւն չեն պահանջում և փոքր տեղ են բռնում: մինչդեռ նոցա տեսքը շատ հաճելի է աչքերին բացի նորանից, որ նոքա կարող են եկամուտ տալ: Ցաւալի է, երբ մտածում ես, որ մեր գիւղերում մեծ մասամբ մեր խեղճ գիւղացի երեխաները մեծանում են, առանց երբէք չտեսնելու քաղցր հիւթալի, հասած խնձորներ կամ ուրիշ պտուղների, բացի գուցէ անտառային հատապտուղներից և կաղնից, որոնք ամեն անտառում ևս չեն պատահում: Չարմանալու է, եթէ նոքա ամառը զանազան անպիտան, երբեմն մինչև անգամ միասակար խոտեր են ուտում:

Սակայն որքան դիւրին է տնկել քանի մի խնձորենի և թուփ տան առաջ. պէտք է միայն նոցա տնկել և ջրել սկզբում: Բայց սորա հետ ծնօղները պէտք է սովորեցնեն իրանց դաւակներին, որ թողնեն իրանց յիմար սովորութիւնը ամեն բան ջարդելու և փչացնելու թէ իրանց սեփականը և թէ ուրիշինը: Պէտք է նոցա հասկացնել թէ հարկաւոր է խնձորենիներ խնամել և ջրել, եթէ կամենում ենք նոցա պտուղներից վայելել, չկտրել այն պրտուղները մենչև որ խակ են, այլ սպասելու է, որ նոքա հասնեն: Խակ խնձորներից միայն

փորն է ցաւում իսկ քաղցրութիւն և համ ամենեկին չօւնին:

Իւրաքանչիւր ցանկացօղն իւր մօտ պողատու ծառեր տնկելու կարող է գեղեցիկ ձեռնարկ գտնել նոցա պատուաստելու և խնամելու համար Բէգնի ուսերէն զբքի մէջ, որը 25 կոպէկ արժէ և ասում է «Թումա Մարսիմօվիչի զրոյցների գիւղացի տղաների հետ պողատու ծառեր տնկելու մասին» (Бесѣды Максимовича съ крестьянскими мальчишками о разведении плодовых деревьев): Ահասարակ ամեն ծառեր, նաեւ անպտուղները, մեծ օգուտ են տալիս ուստի շատ լաւ կլինէր ծառեր շատ տնկել: Բացի նորանից, որ նոքա շինութեան համար գերաններ և տախտակներ և վառելու համար փայտ են տալիս, նոքա օդ են մաքրում և կլիմայ են բարւոքում: Անտառային տեղ երբէք չէ վիճում այնպիսի երաշտութիւն, ինչպէս դաշտային տեղ: Բացի այս ամենից, ամառուան տաք ժամանակ ծառերը հով ստուեր են ձգում, որի տակ հասակաւորներն հաճութեամբ հանգիստ են առնում իսկ մանուկները խաղում են:

Պարձեալ շատ օգտաւէտ կլինէր, եթէ գիւղացիները չլղեհներից ապահովութեան համար իրանց խրճիթները ծածկէին նօսր կաւով պատած յարդով. այսպիսի տանիքները դիւրութեամբ չեն այրւում և աւելի ամուր են, անվնաս մնալով տանն, երբեմն և տանն և հինգ տարի:

Վերէն ասացի թէ մաքրութիւնը և կարգը բարեկեցութեան գլխաւոր պայմաններն են: Բայց աւելորդ չէր լինի, որ անհարուստ մարդիկ հոգային որքան հնարաւոր է փոքր ինչ գեղեցիկութիւններ մուծել իրանց տնային սարք ու կարգի մէջ: Շատ դրամ պահանջող կամայական իրերի մասին չէ խօսքս, բայց օրինակ ծաղիկները—ի հարկէ, ոչ թէ թանկագին օտարերկրեայ բոյսերը, այլ մի պոյտ վարդեր, յափուկ (բեղեղա), անուշահոտ սիսեռ, մանուշակ, չնչին բան արժեն, բայց մեծ վայելչութիւն են տալիս, մանաւանդ քաղաքի բնակիչ-

ներին: ծաղկի պէս անմեղ և գեղեցիկ բան չկայ: Մորա բուրմամբ օդը սենեակի մէջ աւելի մաքուր և թարմ է դառնում: վարդի փափուկ կոկոնները և նորա տերեւների թաւշային կանաչը զրաւում են աչքերը: Մարդը զուարճութեամբ է նայում ծաղկին, վաստակաբեկ չոր աշխատութենից գլուխը բարձրացնելիս և առ ժամանակ կենդանանում է: Վարդը պարտէ՞լ կամ ծաղկանոց է յիշեցնում և մի քանի րոպէ երեակայութեամբ մարդս բնութեան մէջ է ապրում:

Թէպէտ ծաղիկները թանկ չարժեն, այնուամենայնիւ բարեգործ ազդեցութիւն ունին մարդու կազմուածի, ճաշակի և մինչև անգամ ողու տրամադրութեան վրայ: Ծաղիկը փայփայող, հեղ ընկեր է. նա միշտ ժպտում է ձեր առաջ, ուրեմն նորան մի՛ արհամարհէք այն պատճառով միայն, որ նա արժանազին է: Եթէ մաքուր օդը և արեգակի լոյսը մեզ դրամով տալու լինէին, նոքա չքեղութիւն կհամարուէին, բայց որովհետեւ ձրի են, ուստի շատ անգամ նոցա ամենեւին չենք գնահատում:

Բնդհանրապէս բնութիւնը, ինքն ըստինքեան մեզ համար զբօսանքների և զուարճութիւնների հարուստ պաշար է ներկայացնում: Բայց մենք մի տեսակ անտարբերութեամբ ենք նոցա վերաբերում: Ահա մենք ինչի պիտի սովորենք, թէ ինչպէս ձեռք բերելու է վայելչութիւններ այն ամենից, ինչ որ մեզ շրջապատում է:

Անհարուստ մարդու համար ներկայումս գժուար է անային բարեկեցութեան հետեւեալ պայմանները ձեռք բերել: մաքուր, թէև փոքրիկ բնակարան, որտեղ ամեն բան մաքրութեամբ և կարգով փայլէր, ոչինչ պարտք ոչ դիւն, բաւական պաշար մառանում, քանի մի լաւ գիրք սեղանի վրայ և ծաղիկներ լուսամուտների վրայ:

Վերջապէս, բացի ծաղիկներից, այսպիսի յարմար ամփոփ բնակարանի պատերը կարող են զարդարուած լինել գեղարհետական իրերով ևս: Մերկայ դարիս կատարելագործութիւնների շնորհով շատ զլւրութեամբ կարե-

լի է գնել համեմատաբար չնչին գնով ամենահաշակաւոր պատկերների փորագրական, վիմագրական և լուսանկարչական օրինակներ: Գիտութիւնը և հնարագիտութիւնը նկարչական գեղարհետան ամենաշունեւոր մարդիկների համար ևս մատչելի դարձրին:

Արկնումեմ որ ամենեւին հարկ չկայ պատկերի համար թանկ գին վճարել, եթէ նա ինքն ըստ ինքեան լաւ է:

Որեւիցէ հերոսական արարքի, սիրուն դաշտավայրի, փողոցային տեսարանի մի նկար—այս բոլորը նպաստում է ճաշակ զարգացնելուն, ինքնուաման միջոց է անհարուստ մարդիկների մանաւանդ մանուկների համար: Պատկերին նայելով, մենք ակամայ փոխւում ենք առ ժամանակ ամենօրեայ կեանքից դէպի գեղարհետագէտին ողևորող բանաստեղծական կեանքը: Մտաւաւոր գնով կարելի է գնել գեղեցիկ իւղաներկ նկարի օրինակը, որ բոլորովին կփոխարինէ իսկական նկարը, որովհետեւ հաճելի չէ մեր պատերին նայել նաև ամենահարուստ կահաւորած սենեակների մէջ: Առանց պատկերների համարեա սենեակը նոյն է թէ առանց լուսամուտների: Հոգին առ ժամանակ հանգիստ է առնում առօրեայ հոգսերից, եթէ աշխատելիս գլուխ բարձրացնելով, գեղեցիկ դաշտանկար էք տեսնում առաջդ: Դիցուք թէ լուսամուտը նայում է նեղ բակին, կամ հասել է ձմեռը, երկիրը ձիւնով է ծածկուած, երկինքը թիւպած է, իսկ պատկերի վրայ նկարուած է կապոյտ ծով, որի վրայ սահում են սպիտակ առաքաստներով նաւակներ, կամ կանաչ պարտէզ, որի մէջ լի են վարդի և եսամանի ծաղկած թփեր՝ գեղեցիկ ամառուան երկնքի տակ: Չեր մտքերը մի րոպէ կթռչեն դէպի այն ծովը, այն պարտէզը, կկարծէք թէ զբօսնում էք պարտէզում կամ նոյն նաւակով, որ տատանւում է ալիքներով:

Եւ մարդիկները պատկերներն ևս լաւ ազդեցութիւն են անում մեր վրայ: Մոքա մեր մէջ ցանկութիւն են յարուցանում աւելի մօտ ծանօթանալու նոցա կեանքի հետ: Մայրերը նոցա ամբողջ օրերով, մենք կարծես

ընտանանում ենք նոցա հետ ոգով: Նոցա ապ-
նիւ օրինակը շատ անգամ մեզ նեցուկ և
հրահանգ է լինում մեր զործողութիւնների
մէջ:

Վերջապէս Փրկչի երկրաւոր կեանքից տե-
սարաններ ներկայացնող պատկերները կեն-
դանի յիշեցնում են մեզ Աստուածային Վար-
դապետի մեզ աւանդած օրէնքը թէ «Աս-
տուածային» հրաշալի աշխարհը կտամ ձեզ,
անտրտումս սուրբ զոյութեան աշխարհը, մի-
այն թէ կատարեցէք անաշխատ օրէնքը—սի-
րեցէք ընկերին իրբեւ ձեր անձին: Եթէ ձեզ
համար զնած հասարակ պատկերը, քանի մի
տարուց յետոյ, կձանձրացնէ ձեզ, զնեցէք մի
ուրիշ առաւել լաւ: Այդ լաւ նշան է, որ
ցոյց է տալիս թէ ձեր մէջ զարդանում է գե-
ղեցկութեան ճաշակը:

Այդ է ահա սեփական տանդ պատերը
պատկերներով զարդարելու օգուտը: Եթէ մի-
ջոցները ներում են պատկերներին շրջանակներ
շինելու, լաւ՝ շինել տուէք: Իսկ եթէ ոչ—
գամեցէք նոցա պարզապէս պատի վրայ:

Մկրտիչներն երևի չափազանց ուրախ են,
որ նոցա նկարները լուսանկարչական և փորա-
գրական ձևով այժմ ընդհանրապէս մատ-
չելի շքեղութիւն են դարձել: Լուսանկարիչ-
ները, տախտակի պղնձի վրայ փորագրողները
լաւ միջնորդներ են դարձել գեղարհեստները
ժողովրդի մէջ տարածելու: Հռչակաւոր նը-
կարիչների պատկերներն այժմ արդէն հա-
րուստների բացառիկ սեփականութիւն չեն
կազմում փորագրութիւնը տեղափոխեց նոյն
պատկերները վիմագրական ձևով ամենահա-
մեստ գիւղացիների խրճիթների մէջ անգամ:

Ահա այն պատճառները թէ ինչի մենք ա-
մենքս անշուշտ պիտի ուսումնասիրենք տպու-
րու արհեստը: Այս արհեստն իմանալով նաև
բոլորովին չունեւոր մարդիկը կկարողանան
կեանքից ուրախութիւն և վայելչութիւն բա-
տանար: Սակայն ամեն բան նոյն ինքն մար-
դուց կախումն ունի, նա անդադար իր մէջ
ոգու ուրախ տրամադրութիւն պիտի պահպա-
նէ, պիտի պատերազմէ կրքերի դէմ, զսպէ

գիւրազրդութիւն, մի խօսքով պիտի կրթէ
իրան, մշակէ իր բարի յատկութիւններ և
հակմունքն, որոնք յաճախ ննջում են մեր մէջ,
պիտի աւելի կարգայ լաւ գրքեր, պիտի ապրէ
աղնիւ, բարեբարոյ մարդիկների շրջանում,
պիտի աշխատէ հասարակութեան յարգանք
ձեռք բերել և բարի օրինակ լինի երիտասարդ-
ների համար:

Ուրեմն տպուր արհեստը կարող է զա-
նազան ձևերով երեւել: Սա որոշւում է սա-
կաւ բառերով, պէտքէ իմանալ օգուտ քաղել
մեզ շրջապատող ամեն բանից, առանց ար-
համարհելու նաև մանր բաները: Եթէ մեր մէջ
այս ընդունակութիւնը մշակենք, մենք մի ա-
ռանձին հրճուանքով կնայենք մեր առանին
կեանքին և միևնոյն վայելչութեամբ կգրօսենք
հարուստ զրացի անտառների մէջ այնպէս,
իրբեւ թէ մեզ պատկանում լինէին: Սղը, ա-
րեգակը, գաշտափայլերի կանաչը, երկնքում
անցուղարձ անող թափանցիկ ամպերը, ծա-
ղիկները—այս ամենը մեզ համար ուրախու-
թեան պատճառ պիտի լինի: Մենք պիտի սի-
րենք երկիրն իրբեւ մեր ընդհանուր մօրը, պի-
տի համակրենք բնութեանը և նորա իւրա-
քանչիւր երեւոյթին: Ամենարժանազան սերը
դէպի մարդկութիւնը մեր հոգու մէջ ամենա-
վսեմ ձգտմունք է զարթեցնում և այն սերի
ազդեցութեան տակ ոչ միայն մենք ինքներս
բաղդաւոր ենք լինում հազա ուրիշներին ևս
բաղդաւորութիւն ենք հաղորդում:

(Սմայլից). ԽՈՐԷՆ Ծ. Վ. ՍՏԵՓԸՆԷ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ՏՐԻԱՏԻՅ ՅԵՏՈՅ ԵՒ ՄԵԾՆ ՆԵՐՍԻՍԻ ԺԱՄԱՆԱԿԸ:

(Էսթրոնակութիւն *)



Մեր իւր իւր գահակալութիւնը նշանաւոր
էր իւր մի շարք ներքին բարեկարգու-
թեամբ: Անվերջ պատերազմների երեսից փախ-
տական անձինք հաւաքուեցան Արշակի հովանու-

* Նախընթաց համար: